ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԴԱՎԻԹ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՎՍՏՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք.ՎԻԵՆՆԱ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

   Դավիթ Սահակյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Ավստրիայի Հանրապետություն (քաղաք Վիեննա), 2023թ. նոյեմբերի 28-ից 30-ը:

4. **Հրավիրող կողմը.**

   ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) քարտուղարություն:

5. **Գործուղման նպատակը.**

2023թ. նոյեմբերի 27-ից դեկտեմբերի 1-ը Վիեննայում կայացած ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) Գլխավոր համաժողովի 20-րդ նստաշրջանին մասնակցություն:

6. **Քննարկված թեմաները.**

Միջոցառման շրջանակներում հնչած ելույթներում անդրադարձ է կատարվել Հայաստանում կայուն և ներառական արդյունաբերական զարգացմանը՝ հիմնված նորարարության խթանման, տնտեսությունում և արդյունաբերությունում թվային վերափոխման, կրթության ոլորտում ներդրման, գործարարության համար բարենպաստ պայմանների ստեղծման, ինչպես նաև երկարաժամկետ կայունության ապահովման համար ամուր ինստիտուտների կառուցման վրա:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Ս.թ. նոյեմբերի 29-ին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Դավիթ Սահակյանը մասնակցել է «Արդար գլոբալիզացիա. նորարար լուծումներ վաղվա արդյունաբերության համար» խորագրով նստաշրջանի աշխատանքներին (Fair Globalization: Innovative Solutions for the Industry of Tomorrow):

Միջոցառման մասնակցությունը հնարավորություն է ընձեռել նպաստել UNIDO-ի կողմից իրականացվող Հայաստանում բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության ազգային ռազմավարության ծրագրի և դրա իրականացման ճանապարհային քարտեզի մշակմանն ուղղված աշխատանքներին, Հայաստանի համար հուսալի և հեռանկարային ռազմավարության ձևավորմանը: Աշխատաժողովի շրջանակներում իրականացվել են աշխատանքային քննարկումներ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության մշակման, դրա հիմնական ուղղությունների կարևորության վերաբերյալ: Մասնագիտացված լսարանին ներկայացվել են նորարարություններին և տեխնոլոգիական առաջընթացի խթաննմանն ուղղված Հայաստանի կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունը, որը նպատակ ունի սահմանել Հայաստանի բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ռազմավարության առաջընթացի տեսլականը:

Համաժողովի ընթացքում կազմակերպված «Ներառական արհեստական բանականություն. արդյունաբերությունում և արտադրությունում թվային բաժանման կամրջում» խորագրով թեմատիկ հարակից միջոցառմանը որպես բանախոս ս.թ. նոյեմբերի 30-ին հանդես է եկել նաև Դավիթ Սահակյանը: Վերջինս ներկայացրել է կառավարման ոլորտում արհեստական բանականության ինտեգրման ուղղությամբ ՀՀ կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունը, նշել, որ արհեստական բանականությունը և թվային տեխնոլոգիաները նպաստում են արդյունաբերության տարբեր ոլորտների կայուն զարգացմանը: Այնուհետև խոսել արհեստական բանականության ներկա վիճակի, դրա կիրառման նորարարական մոտեցումների, կայուն և ներառական ապագայի համար դրա առավելությունները զարգացնելու նպատակով համատեղ ջանքերը մեկտեղելու մասին, քննարկել արհեստական բանականության տեխնոլոգիաների արդյունաբերության ոլորտների զարգացման և նորարարության տեսանկյունից ստեղծված հնարավորություններն ու մարտահրավերները: Հարակից միջոցառման նպատակն էր խթանել արդյունավետ երկխոսությունը արդյունաբերության մեջ արհեստական բանականության տարբեր կիրառությունների վերաբերյալ, լուծել հրատապ խնդիրները, ուսումնասիրել հնարավոր լուծումները և պատկերացում կազմել ոլորտում արհեստական բանականության դերի վերաբերյալ:

Միջոցառման շրջանակներում Դավիթ Սահակյանը ս.թ. նոյեմբերի 29-ին հանդիպել է ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) գլխավոր տնօրեն Գերդ Մյուլլերին,

UNIDO-ի գլխավոր տնօրենի տեղակալ, տեխնիկական համագործակցության և կայուն արդյունաբերական զարգացման տնօրինության ղեկավար Սիյոն Զունին և UNIDO-ի համաշխարհային գործընկերության և արտաքին կապերի տնօրինության, Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի ղեկավար Սոլոմիյա Օմելյանի հետ: Վերջիններիս հետ քննարկվել են ՀՀ-ում բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանն ուղղված համագործացության հնարավորությունները:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցի ընթացքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել շարունակելու քննարկումները արհեստական բանականության ռազմավարական հեռանկարների մշակման, ինչպես նաև համատեղ գործողությունների իրականացմանն ուղղված ծրագրերի վերաբերյալ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

ԴԱՎԻԹ ՍԱՀԱԿՅԱՆ

05.12.2023թ.